

## Թուխմանուկ

Ֆաբրիկայի վերազինում, վերակառուցում թէ՝ պոչամբարների պատնեշի հզորացմամբ նոր, ավելի ընդարձակ պոչամբարի կառուցում

Համաձայն ՀՀ Բնապահպանության նախարարության (ԲՆ) [www.mnp.am](http://www.mnp.am) կայքում փորձաքննություն բաժնում տեղադրված տեղեկատվության “Մեզո Գոլդ” ՍՊԸ-ն ներկայացրել է ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի հանքարդյունահանման համալիրի հարստացուցիչ ֆաբրիկայի վերազինման, պոչամբարի պատնեշի և պոչանքների ժամանակավոր չոր պահեստարանի նախագծի լրակազմ հայտը, որը ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունից (ԷԲՊՆ), համաձայն կարգի, ուղղվել է ՀՀ ԲՆ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման համար՝ հայտին կից հիմնական փաստաթղթերով, բացառությամբ քարտեզագրական նյութերի:

Մինչ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն” ՊՈԱԿ-ը կտա իր փորձաքննական եզրակացությունը, սույն նյութով ցանկանում ենք նրանց, ինչպես նաև ՀՀ ԷԲՊՆ և ԲՆ համապատասխան կենտրոնների և վարչությունների ուշադրությունը հրավիրել որոշ հանգամանքների վրա, ինչն անթույլատրելի է համարում ներկայումս հայտի փորձաքննության իրականացումը: Դեռևս 2014թ.-ին կատարված մի շարք վերլուծություններ, այդ թվում ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի կողմից կատարված և [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքում տեղադրված, ինչպես նաև 11.12.2014թ.-ին տրված թիվ ԲՓ-93 Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությամբ անթույլատրելի է համարվում Թուխմանուկի հանքավայրի շահագործումը, որն իրականացվում է ՀՀ ՀՍՕ-ի և ընկերության հետ կնքված պայմանագրի մի շարք կետերի խախտման և շահագործման աշխատանքային նախագծի բացակայության պայմաններում (ՀՀ ՀՍՕ Հոդված 30): Այս պարագայում, եթե ընկերությունը իրավունք չունի շահագործելու նշված հանքավայրը, փորձաքննությանը ներկայացված փաստաթղթերում առկա են հանքավայրի վերաբերյալ կոպիտ սխալներ պարունակող տեղեկություններ, շահագործման աշխատանքների ընթացքում ընկերության կողմից թույլատրվել են լեռնատեխնիկական, շինարարական նորմերի կոպիտ սխալներ (այդ մասին նրանք փաստում են հենց ներկայացված փաստաթղթերում), ընկերությունը ունի վատ համբավ հանքարդյունաբերական

աշխատանքների կազմակերպման ոլորտում և չունի համապատասխան ֆինանսական երաշխիքներ, մեր կարծիքով ընկերությանը առաջին հերթին պետք է հետ վերադարձվեր ներկայացված հայտը առնվազն այն վերանայելու և սխալները շտկելու համար, իսկ եթե նույնիսկ այն ընդունվել է փորձաքննության, ապա նրան պետք է տրվի բացասական գնահատական:

Համաձայն ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի Հոդված 7-ի՝ Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում փորձաքննության անցկացումը, ՀՀ-ում նշված ոլորտում իրականացվում են ընդերքաբանական, շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննություններ, որից հետո ստացված դրական եզրակացությունների հիման վրա միայն ընդերքօգտագործողին կարող է թույլատրվել ներկայացված հայտի հիման վրա սկսել օգտակար հանաձոյի արդյունահանման աշխատանքներ:

Ներկայումս նշված ընիկերության կողմից ներկայացված հայտը, որն անցել է ՇՄԱՓ փուլ, պետք է անցած լիներ նաև ընդերքաբանական փորձաքննություն և գուգահեռ անցկացվեր տեխնիկական անվտանգության փորձաքննությունը: Վերջինիս մասին ոչինչ ասել չենք կարող, սակայն հասկանալի է, որ ՀՀ ԷԲՊՆ չի անցկացրել համապատասխան ընդերքաբանական փորձաքննություն՝ պարզելու որքանով է փաստաթղթերում առկա տեղեկատվությունը համապատասխանում իրականությանը՝ ներկայացված պաշարները իրականությանը չեն համապատասխանում, չկա հանքավայրի շահագործման եղանակի նպատակահարմարության և կոնդիցիոն ցունանիշների փոփոխման կամ վերանայման որևէ փաստաթուղթ:

Թուխմանուկի հանքավայրի հարստացուցիչ ֆաքտիկայի վերակառուցման և չոր պոչանքների պահեստավորման ՇՄԱԳ հաշվետվությունում նշվում է, որ հանքավայրի պաշարաները վերահաստատվել են ՀՀ ԷԲՊՆ աշխատակազմի ՕՀՊԳ կողմից 2006-2008թթ. իրականացված լրահետախուզական աշխատանքների արդյունքների հիման վրա (ՀՀ ՕՀՊԳ որոշում N 234, 30.10.2009թ.): Նշված որոշումը եթե մինչև վերջ կարդանք, կհասկանանք, որ բերված քանակությամբ նոր պաշարները չեն հաստատվել, իսկ հաստատվելու դեպքում էլ այդ պաշարները պետք է պատկանեին շտոկվերկային հանքային մարմնին, որի շահագործման թույլտվությունը ընկերությունը չունի: Ընկերությունը, տրված թույլտվությամբ և պայմանագրով, իրավունք ունի շահագործելու միայն թիվ 1 և 15 երակային հանքային մարմինները: Միևնույն ժամանակ վերջին

տարիներին իրականացված պաշարների հաշվարկն ընկերության կողմից իրականացվել է նախկինում հաստատված կոնդիցիոն ցուցանիշներով՝ որում հաշվի էր առնված հանքավայրի փակ եղանակով շահագործման հանգամանքը: իսկ օրենքը պարտադրում է, որ առնվազն 5 տարին մեկ անգամ կատարվի կոնդիցիոն ցուցանիշների վերանայում, առավել ևս հանքավայրի շահագործման եղանակի փոփոխության դեպքում դա անտեսել չի կարելի:

Նույն փաստաթղթում՝ էջ 32, նշվում է

“Աղացներիաշխատանքը ասակարգիչներին է՝ փակցիկլում,  
և ֆլուտացման տեխնոլոգիային երդումը, թույլատան ավելացնելու կորզումը. ևս 68.9%-ից ուշ է դրա կուրզի հանունուրկումը՝ ըստ միայն մի գույնի համաձայն ֆաբրիկայի վերագինման նախորդագրի, պետք է աշխատեր այս նույն ցուցանիշներով՝ գրավիտացիոն-ֆլուտացիոն եղանակով.“Թուխմանուկի հարստացուցիչ ֆաբրիկան աշխատում է գրավիտացիոն-ֆլուտացիոն կոմբինացված հարստացման եղանակով, ապահովելով հանքաքարերից մետաղի ընդհանուր 87.52 % կորզում, որից գրավիտացիոն եղանակով 18.62 % և ֆլուտացիոն՝ 68.9 %” (մեջբերում նախորդ ծրագրերից): Այս դեպքում հարց է առաջանում, ի՞նչն է փոխվելու և հատկապես բարելավվելու ֆաբրիկայի աշխատանքում, եթե նա հենց այդպես մի քանի տարի առաջ դեռ պետք է աշխատեր:

Էջ 33-ում բերված ֆաբրիկայի արտադրողականության ծավալները որքանով են՝ համապատասխանում հանքավայրի արտադրողականությանը՝ եթե լիներ հանքավայրի աշխատանքային նախագիծ միգուցե մենք կարողանային համեմատել և ճիշտ եզրակացնելուն անել, բայց ինչպես կարգն է պահանջում՝ այն բացակայում է:

Հաջորդ հարցը վերաբերվում է չոր պոչերի ստացման տեխնոլոգիային, որն այս դեպքում կարծես թե խարուսիկ է: Աշխարհում նշված տեխնոլոգիան կիրառելի է և ՇՄՊ տեսանկյունից ընդունելի: Սակայն չոր պոչերի ստացման տեխնոլոգիայում մեր հայտատու ընկերությունը կարծես թե մոռացել է պոչերի ամբողջովին վնասազերծման՝ հանքաքարերում և պոչերում մնացող վնասակար տարրերից, և նրանց ցեմենտացնող նյութերով կապակցման հանգամանքների մասին:

Ընկերությունը ներկայացնում է բնապահպանական մոնիթորինգի ծրագիր, իսկ մինչ այս այդ նույն ընկերության կողմից որքան բնապահպանական գումարներ են վճարվել պետությանը և ինչպիսի բնապահպանական միջոցառումներ են

իրականացվել՝ համապատասխանաբար դրանց վրա որքան գումար է վատնվել ընկերության կողմից, - այս հարցը պարզաբանման կարիք ունի:

Ընկերությունը ՀՀ ԷԲՊՆ ներկայացրել է ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու

հանքավայրի

հանքարդյունահանմանհամալիրիհարստացուցիչֆաբրիկայիվերազինման,

պոչամբարիպաշտպանիչպատնեշիւպոչանքներիժամանակավորչորպահեստարանի նախագծի լրակազմիայտի փասթաթղթերի թերի փաթեթ, որն էլ փոխանցվել է ՀՀ ԲՆ: Այսպես ներկայացվել է ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի հարստացուցիչ ֆաբրիկայի պոչամբարի վերակառուցման և վերականգնման աշխատանքային նախագիծը առանց վերջինիս շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության: Միևնույն ժամանակ դրա փոխարեն նախարարություն է ներկայացվել Թուխմանուկի հանքավայրի հարստացուցիչ ֆաբրիկայի և չոր պոչանքների պահեստավորման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը՝ առանց նշված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքային նախագծի: Չմոռանանք նշել նաև, որ համաձայն պորոն Է. Շախլյանի գրության, քարտեզագրական նյութերը ՀՀ ԲՆ փոխանցվելու են ընդերքօգտագործողի կողմից առձեռն՝ չի բացառում քարտեզագրական նյութերում փոփոխությունների և ՀՀ ԷԲՊՆ ներկայացված նյութի հետ անհամապատասխանությունը:

Առհասարակ պոչամբարների պատնեշի հզորացման և հետագա տեխնիկական բարդություններից ու վթարներից խուսափելու համար ընկերությունը իրավունք չուներ պոչամբարի սխալ շահագործում կատարելու և անթույլատրելի կերպով պոչամբարի պատնեշը մի քանի մետր բարձրացնելու համար: Սրա համար նա պետք է համապատասխան կերպով տուփանվեր և վթարները անհապաղ վերացներ: Նախագծում ոչ մի կոնկրետ նշում չկա պոչամբարների ծավալների վերաբերյալ, որպեսզի հասկանալի լինի թե միավորման արդյունքում ընկերությունը ինչ է ստանալու, ինչ զաղտնիք է փորձում թաքցնել այս քայլի տակ և այլն:

Անհասկանալի է նաև ժամանակավոր պոչամբարի կառուցման հանգամանքը՝ ընկերության ներկայիս ֆինանսական դրության պայմաններում:

Այսպիսով ամփոփելով նյութը, գտնում ենք, որ Մեզո Գոլդ ընկերության կողմից ներկայացված հայտին ՇՄԱՓԿ-ի կողմից պետք է տրվի բացասական եզրակացություն, հաշվի առնելով հետևյալ կարևոր հանգամանքները.

- Ընկերության կողմից ներկայացվել է ոչ ամբողջական հայտ, որը վերաբերվում է միայն ֆաքտիկայի վերագինմանն ու պոչամբարների պատվարների հզորացմանը, իսկ հանքավայրի շահագործման աշխատանքային նախագիծն ու վերջինիս ՇՄԱԳ հաշվետվությունը բացակայում են: Ընկերությունը չունի հանքավայրի շահագործման համապատասխան հաստատված աշխատանքային նախագիծ:

- Ներկայացված հայտում աշխատանքային նախագիծը և ՇՄԱԳ հաշվետվությունը վերաբերվում են ներկայացված հայտի երկու տարբեր կողմերի՝ մեկը պոչամբարին, մյուսը ֆաքրիկային:

- Ֆաքրիկայի վերակառուցման ծրագրում չկա ոչ մի դրույթ, որը կհաստատի ֆաքրիկայի առավել լավագույն որակի հասցմանը, ամեն ինչ այնպես է, ինչպես ֆաքրիկան պետք է աշխատեր արդեն իսկ նախորդ հաստատված ծրագրով:

- Նախկին պոչամբարի պատնեշի անվտանգության պահպանման հարցերը ընկերության ստանձնած պարտավորությունների մեջ է մտնում և նա անհապաղ պետք է վերացրած լիներ այդ սխալը և իրավունք չուներ պոչամբարի ծավալը ինքուրույն ավելացնելու:

- Անհասկանալի և անընդունելի է ժամանակավոր նմանատիպ պոչամբարի կառուցման պատրաստակամությունը ընկերության կողմից:

- Աշխատանքների իրականացման ֆինանսական երաշխիքները հայտնի չեն:

- Հայտում առկա փաստաթղթերը ներկայացված են մի շարք սխալներով, պարունակում են հատկապես պաշարների վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկատվություն, հանքավայրի արտադրողականությունը չի համապատասխանում ֆաքրիկայի արտադրողականությանը, տարածքի ապարների և պոչամբարի պատվարի շերտերը նկարագրում են մեկ միասնական համակարգով և անհասկանալի, նյութը ներկայացված է տարբեր լեզուներով:

Հարություն Մովսիսյան, երկրաբան

Իրավաբանական կարծիք

Թուխմանուկ հանքավայրի պոչամբարների վերաբերյալ

«Մեզոն Գոլդ» ՍՊԸ հայտ է ներկայացրել է Թուխմանովի ոսկու հանքավայրի հանքարդյունահանման համալիրի հարստացուցիչ ֆաբրիկայի վերագինման, պոչամբարի պատճեշի և պոչանքների ժամանակավոր չոր պահեստարանի նախագծի վերաբերյալ: Սույն հայտը ներկայացվել է մի շարք խախտումներով, հետևաբար փորձաքննություն իրականացնող մարմնի կողմից չի կարող տրվել շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննության դրական եզրակացություն հետևյալ պատճառաբանություններով:

1. Նշված հայտը ներկայացվել է առանց այդ գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության: Դրա փոխարեն << ԲՆ է ներկայացվել հանքավայրի հարստացուցիչ ֆաբրիկայի և չոր պոչանքների պահեստավորման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը: >> Ետևաբար, պարզ չէ, թե ի՞նչ փորձաքննություն պետք է անցկացվի՝ ֆաբրիկայի, թե պոչանքների: Պարզ չէ նաև՝ թե ընդլայնվելու է պոչանքը, թե միայն վերակառուցվելու: Եթե ընդլայնվելու է, ապա ինչո՞ւ չեն ներկայացված հողի հատկացման որոշումը, այդ տարածքի ՇՄԱԳ նախագիծը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Բացի այդ, չի ներկայացվել նշված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքային նախագիծը:

2. «Մեզոն Գոլդ» ՍՊԸ իր գործունեության ընթացքում թույլ են տվել << օրենսդրության և պայմանագրի բազմաթիվ խախտումներ, ինչը նշված է նաև ընկերության կողմից ներկայացված հայտում: Մասնավորապես, հանքի պաշարները հաստատված չեն եղել և ընկերությունը անօրինական զբաղվել է հանքարդյունահանման: << ԸՄՕ 7-րդ հոդ. 4-րդ մասի համաձայն. «4. Ընդերքի տրամադրումն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով թույլատրվում է միայն դրանում պարունակվող պաշարների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ընդերքաբանական փորձաքննությունից և ուսումնասիրված ու գնահատված պաշարների քանակը և որակը սահմանված կարգով հաստատվելուց հետո:» Խախտվել են պոչանքների կառուցման շինարարական նորմերը, ինչի արդյունքում պատճեշը քանդվել է և տեղի է ունեցել վնասակար նյութերի արտահոսք: Այս պարագայում << ԸՄՕ 30-րդ հոդ. համաձայն ընկերության ընդերքօրտագործման իրավունքը պետք է դադարեցվի, այլ ոչ թե տրվի փորձաքննության դրական եզրակացություն:

3. «Հ ԸՍՕ 7-րդ հոդ. 1-ին մասի համաձայն. «1. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում իրականացվում են հետևյալ փորձաքննությունները՝

- 1) ընդերքաբանական.
- 2) շրջակա միջավայրի վրա ազդեցության.
- 3) տեխնիկական անվտանգության:» Սակայն, նախագիծը չի անցել ընդերքաբանական և տեխնիկական անվտանգության փորձաքննություններ, իսկ այդ պարագայում չի կարող անցկացվել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն:

4. «Բնապահպանական փորձաքննության» ՊՈԱԿ-ի 11.12.2014թ. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական բացասական եզրակացության մեջ նշված որևէ դիտողություն հաշվի չի առնվել: Մասնավորապես, այս անգամ նունակես չի ներկայացրել գնահատում Հանքավանի ջրաբանական արգելավայրի, ինչպես նաև ստորգետնյա ջրավագանի և աղբյուրների վրա հնարավոր ազդեցության մասին: Բացակայում են նաև ընկերության կողմից մինչև օրս իրականացված աշխատանքների և նախատեսվող գործունեության՝ հնարավոր դրական և բացասական ազդեցության մասին տեղեկատվություն: Հանքավայրը չունի սահմանային թույլատրելի արտանետումների չափաքանակներ, իսկ Ընկերության գործունեության արդյունքում առաջացած թափոնները, չեն նորմավորվել, հաշվառվել, անձնագրավորվել, ինչպես նաև չեն կատարվել ՀՀ ԸՍՕ 59-րդ հոդ. 3-րդ մասի 13-րդ և 17-րդ կետերով սահմանված պարտավորությունները:

5. Ընկերությունը չի ներկայացրել իր ֆինանսական կայունության և նախատեսվող աշխատանքների կատարման ֆինանսական երաշխիքներ: Ընկերության ողջ գույքը և դրամական միջոցները դրված են արգելանքի տակ և չուրջ 3 տարի է Ընկերությունը որևէ գործարք չի կատարել, ունի մի քանի միլիոնի չափով պատքեր իր նախկին աշխատողների աշխատավարձերի, ֆիզ. արձակուրդի գումարների գծով, որոնցով առկա են օրինական ուժի մեջ մտած բազմաթիվ դատական ակտեր: Բացի այդ, Ընկերությունը ունի պարտքեր պետական բյուջեին, այլ կազմակերպություններին, այդ թվում նաև Մելիք գյուղի գյուղապետարանին /ըստ մեզ հասած տեղեկատվության/:

Այսպիսով, «Մեգո Գոլդ» ՍՊԸ իր գործունեության ընթացքում, տարիներ շարունակ զբաղվել է անօրինան գործունեությամբ, խախտել է ՀՀ օրենսդրությունը, իր աշխատողների իրավունքները, պատճառել է զգալի վնաս շրջակա միջավայրին և մարդկանց առողջությանը, հետևաբար այդ Ընկերության հանքարդյունահանման իրավունքը պետք է դադարեցվի և այս պարագայում չի կարող իրականացվել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և տրվել դրական եզրակացություն:

Եկոլոգ-իրավաբան՝

Նազելի Վարդանյան

## Վ Ե Ր Լ Ո Ւ Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ Արագածոտնի մարզի թուխմանուկի ուսկու հանքավայրի շահագործման պայմանագրային խախտումների և դրանց հետ կապված որոշ փաստաթղթերի

ԵՊՀ Կայուն գարգարման կենտրոնի աշխատակիցներն ու ներգրավված փորձագետներն ուսումնասիրելով թուխմանուկի հանքավայրի շահագործման

պայմանագիրն ու դրա հետ կապված որոշ փաստաթղթեր և կատարելով համակողմանի վերլուծություններ եկան այն եզրահանգմանը, որառկա են հանքավայրի շահագործման պայմանագրային խախտումներ:

Ստորև ներկայացնում ենք առկա փաստաթղթերի վերլուծության հիման վրա կենտրոնի կողմից արված դիտարկումները.

1. «Հանքարդյունահանման նպատակով Ընդերքօգտագործման լիցենզային պայմանագրի թիվ 287»-ում, տրված 31.07.2006թ., առկա են մի շաղք միմյանց հակասող փաստեր:

- Պայմանագրի հիմքում դրված է 05.08.2005թ. N ՀԱ-Լ-14/356 հանքարդյունահանման լիցենզիան՝ տրված մինչև 12 տարի գործողության ժամկետով (2017թ.): Լիցենզիայում հաստատված պաշարների համար հիմք է հանդիսացել <<ՕՀՊԳ-ի 26.01.2004թ. N 28 որոշումը, որով պաշարները հաստատված են միայն N 1 և N 15 երակային մարմինների համար: Համաձայն լիցենզիայի տարեկան արտադրողականությունը սահմանվել է 168.5 հազ.տ հանքաքար, 667.2 կգ ոսկի (մ.ա. 3.95 գ/տ) և 3.725 տ արծաթ (մ.ա. 22.11 գ/տ):
- Թիվ 287 պայմանագրով, կետ 2, շահագործման առաջին երկու տարիների համար տարեկան արտադրողականությունը սահմանվել է 76546.55 տ հանքաքար բաց եղանակով, իսկ 6.5 տարվա համար՝ տարեկան 168500 տ – ստորգետնյա եղանակով շահագործման համար – ընդհանուրը 8.5 տարվա համար՝ 1248.343 հազ. տ: Այսուհետև, նույն կետում թույսմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի(բացահանք) հաշվեկշռային պաշարներն օգտագործման ամբողջ ժամկետի համար՝ 1259.4 հազ. տ (միայն N1 և N15 հանքամարմինները, միջին պարունակությունները՝ Աս - 6.36 գ/տ, Աց - 35.49 գ/տ) տրվել են ժամանակավոր տնօրինման և շահագործման 8.5 տարի ժամկետով: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նշված նախադասություններում առկա անհամապատասխանություններին կապված հանքաքարի ընդհանուր արտադրողականության ծավալի, միջին պարունակությունների և բուն «բացահանք» տերմինի շեշտման առկայության հանգամանքների վրա:
- Պայմանագրի 4.1 կետով լիցենզառուն պարտավորվել է ոչ ավել քան երեք տարի, տարեկան նվազագույնը արդյունահանել 38273.2 տ հանքաքար: Համաձայն 2006-2012թթ. «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ի կողմից թույսմանուկի հանքավայրից արդյունահանված հանքաքարի և մետաղների ծավալների մասին տրված «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տեղեկատվության 2007, 2009 և 2012 թթ. արդյունահանում ընդհանրապես չի իրականացվել, իսկ 2006, 2008, 2010 և 2011 թթ. արդյունահանման ծավալները, համապատասխանաբար, կազմել են 12.1; 45.66; 16.8 և 18.31 հազ. տ: Ընդհանուր 2006-2012թթ. արդյունահանվել է 92.87 հազ.տ հանքաքար: Ստացվում է, որ ընկերությունն արդեն իսկ խախտել է պայմանագրի 4.1 կետի իր պարտավորվածությունը: Իսկ լիազոր մարմինը նույն պայմանագրի 5.1.2. կետով իրավունք ուներ միակողմանի վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը:
- Պայմանագրի վաղաժամկետ լուծման համար հիմք է հանդիսանում նաև սույն պայմանագրի հավելված 3-ի՝ «Հատուկ պայման» կետերի չիրագործումը

լիցենզառուի կողմից: Այն է՝ լիցենզառուն պարտավորվել էր ստորգետնյա հանքի լրահետախուզման աշխատանքներն ավերտել մինչև 01.05.2008թ.-ը, վերագնահատել պայմանները և նոր երկրաբանատնտեսագիտական գնահատման արդյունանքների հիման վրա լրամշակել ստորգետնյա հանքի շահագործման նախագիծը (արդյո՞ք արված են նշված աշխատանքները) մինչև 01.11.2008թ.: Նշված աշխատանքների չկատարման դեպքում լիցենզիայի ուժը կորցված է համարվում, իսկ պայմանագիրը պետք է լուծվեր: Այստեղ բերվում են հիմնավորումներ, որ «Հատուկ պայմանի» ժամկետը երկարաձգվել է մինչև 2010 թ.-ը կամ այն, որ ընկերության կողմից իրականացվել են որոշակի հետախուզական աշխատանքներ և պաշարների վերագնահատում, նոր կոնդիցիոն ցուցանիշների հաստատմամբ: Վերջիններիս մենք կանդրադառնանք ստորև, սակայն պետք է արձանագրել, որ Հատուկ պայմանի կետերն արդյունքում մնացել են անկատար:

2. 2006-2012թ. «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի կողմից թուխմանուկի հանքավայրից արդյունահանված հանքաքարի և մետաղների ծավալների մասին տրված «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տեղեկատվության վերաբերյալ:

- Համաձայն նշված տեղեկատվության, ստացվում է, որ սկսած 2010 թ.-ից հանքավայրում շահագործվել են ոչ միայն N1 և N15 հանքային մարմինները, այլ նաև նրանց շուրջ առկա երակիկացանավոր հանքայնացմամբ ներկայացված տեղամասի հանքաքարերը(շտոկվերկ), որոնցպաշարները <<ՕՀՊԳ-ի կողմից դեռևս հաստատված չեն և հաշվառված չեն ՕՀՀ Հանրապետական հաշվեկշռում (<<ՕՀՊԳ որոշում N 234, 30.10.2009թ.):

2010-2011թ., համաձայն նշված տեղեկատվության, արդյունահանված հանքաքարում ուկու միջին պարունակությունը կազմել է 1.17 և 1.54 գ/տ, ինչը մի քանի անգամ ցածր է հանքային մարմիններում հաստատված միջին պարունակություններից և բնորոշ չէ երակային հանքային մարմինների հանքայնացման խտությանը: Վերջինս փաստում է հանքավայրի տարածքում չհաստատված պաշարների անօրինական շահագործման հանգանանքը: Համաձայն վերը նշված պայմանագրի շահագործման էին ենթակա միայն թիվ 1 և 15 երակային հանքային մարմիններն իրենց հանքաքարերով և մետաղների բարձր պարունակություններով: Ընկերությունը 2010-2011թ. ընթացքում, արդյունահանել է և << ընդերքի պաշարների պետական հաշվեկշռից մարել է պաշարներ, որոնք այդ հաշվեկշռում գրանցված չեն և որի արդյունահանման համար համապատասխան Պայմանագիր չի ունեցել: Այստեղ կարող է բերվել պատճառաբանություն, թե իրականում տեղի է ունեցել հանքաքարի աղքատացում, այլ ոչ շտոկվերկային հանքային մարմնի շահագործում: Պետք է ասել, որ նույնիսկ այդ դեպքում միևնույն է խոսք գնում է պայմանագրային խախտման մասին:

3. <<ՕՀՊԳ-ի N 234 Որոշման վերաբերյալ (30.10.2009թ.):

Համաձայն 1-ին կետի, որոշվել է հաստատել թուխմանուկի ուկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի պաշարները 01.01.2009թ. դրությամբ, որոշման մեջ

ներկայացված աղյուսակի թվերին համապատասխան, որում ընդգրկած են ինչպես N1 և N15 երակային հանքային մարմինները, այնպես էլ շտոկվերկը: Այստեղ անհասկանալի է 3-րդ և 4-րդ կետերի առկայությունը: 3-րդ կետում նշվում է Կենտրոնական տեղամասի թերուտումնասիրվածության իրողության մասին, այդ դեպքում անհասկանալի է պաշարների հաստատումը. պաշարները կարելի է միայն հաստատել համապատասխան ուսումնասիրվածության աստիճանի առկայության և ներկայացված հաշվարկային պարամետրերի հավաստիության պայմաններում, այս դեպքում 1-ին կետի որոշումը պետք է լիներ հակառակը: Եթե թերի է ուսումնասիրված կամ ընդհանրապես կատարված աշխատանքները չեն համապատասխանում պահանջներին, ոչ մի դեպքում չի կարելի հաստատել պաշարներ, կամ պաշարները կարող են հաշվարկվել և հաստատվել այն կարգերով, որոնց կիամապատասխանեն այդ ուսումնասիրությունների որակն ու կատարված աշխատանքների մեթոդիկան, հետախուզական ցանցի խտության աստիճանը: 4-րդ կետում նշվում է. «Առաջարկել «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին ձեռնպահ մնալ օգտակար հանածնների հանքավայրերի Հանրապետական հաշվեկշռում որոշման 1-ին կետում հաստատված պաշարներից բխող փոփոխությունների կատարումից»: Նշված կետերը հակասում են մեկը մյուսին, իսկ ընդհանուր առմանը ստացվում է, որ հանքավայրի հաստատված պաշարները մնում են անփոփոխ և համապատասխանում են ՀՀ ՕՀՊԳ-ի 26.01.2004թ. N28 որոշմամբ հաստատված պաշարներին (միայն N1 և N15հանքային մարմինների համար), իսկ շտոկվերկի պաշարները հաշվեկշռում չեն հաշվառվում, բնականաբար նաև չեն հաստատվում: Ավելացնենք նաև, որ ընկերությունը 2009թ.-ից հետո փաստորեն աշխատանքներ չի տարել N 234 որոշման 3-րդ և 4-րդ կետերի դիտողությունների շտկման և պաշարների նոր վերագնահատում կատարելու ու հաստատելու ուղղությամբ: Արդյունքում Թուխմանուկի Կենտրոնական տեղամասի համար 2004թ-ից հետո հաստատված և հաշվեկշռում հաշվառված նոր պաշարներ չկան:

4. ՀՀ ԷԲՊՆ աշխատակազմի դեկավար Կ. Ղահրամանյանի` Ս. Աղամյանի և Ա. Գրիգորյանի նամակներին տրված պատասխաններից:
  - 24.05.2013թ. և 29.05.2013թ. տրված պատասխանները կրկնելով մինյանց, պարունակում են հետևյալ հարցը. Պայմանագրի հավելված 3-ի հատուկ պայմանի կետերի կատարման տեսանկյունից ստացվում է, որ հանքավայրում իրականացված լրահետախուզական աշխատանքների արդյունքում կատարվել է պաշարների վերագնահատում-վերահաստատում, որից հետո նոր երկրաբանատնտեսագիտական պայմանները կանխորոշել են հանքավայրի շահագործման քաց մշակման եղանակի արդյունավետությունը: Հավանաբար նախարարությունում հարցի պատասխանի շարադրման ժամանակ ի նկատի են ունեցել ՀՀ ՕՀՊԳ-ի N 234 որոշումը, համաձայն որի պաշարները հաստատվել են սակայն հաշվեկշռում չեն գրանցվել, ինչն առաջին հերթին անհասկանալի որոշում է ինչպես արդեն նշեցինք, և երկրորդը, նոր երկրաբանատնտեսագիտական գնահատման արդյունքներով անհրժեշտ էր ներկայացնել քաց եղանակով շահագործման աշխատանքների նոր նախագիծ և կնքել նոր պայմանագիր, քանի որ իին Պայմանագրում նշված է միայն համար 1 և 15 հանքային մարմինների և նրանց

պաշարների շահագործման հանգամանքը, իսկ շտոկվերկային հանքային մարմնի մասին պայմանագրում ընդհանրապես խոսք գնալ չեղ կարող:

- 23.09.2013թ.-ին տրված պատասխանում նշվում է, որ «... Մինչ օրս տնտեսվարող շահագործման աշխատանքներ է իրականացնում ՊՎ-184 պայմանագրով...»: Ծանոթանալով նշված պայմանագրի հետ, անհասկանալի է մնում այդ պայմանագրի «վերակնքման» հիմնավորումն ու նպատակը և ընդհանուր առմանք պայմանագրի կառուցվածքը. Եթե այն հանդիսանում է նախորդ պայմանագրի ուղղակիրեն վերակնքված տարբերակը, ապա ինչու՞ չի ներառում այն բոլոր պահանջների ու պարտավորությունների կետերը, որոնք առկա էին հիմնական պայմանագրում: Իսկ եթե հանդիսանում է բոլորովին նոր պայմանագիր, ապա ինչու՞ են հանքաքարի և մետաղների քանակությունները բերված նախորդ պայմանագրի թվերին համապատասխան և 2008-2012թթ. արդյունահանված ու մարված պաշարները հաշվի չենառնված, ինպես նաև, համաձայն 2011թ.ին ընդունված << Ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին, որից ելնելով էլ կնքվել է նոր պայմանագիրը, ինչու՞ չեն իրականացվել նոր օրենքով ընդունված նախագծերի ներկայացման պահանջներն ամբողջությամբ:
- 5. Թուխմանուկի հարստացուցիչ ֆարիկան աշխատում է գրավիտացիոն-ֆլուտացիոն կոմբինացված հարստացման եղանակով, ապահովելով հանքաքարերից մետաղի ընդհանուր  $87.52\%$  կորզում, որից գրավիտացիոն եղանակով  $18.62\%$  և ֆլուտացիայով՝  $68.9\%$ :

ԵՊՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

18.12.2014